

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

### ՀՀ մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

18.05. 2020թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

Գ.Մարկոսյան	-մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյան	- գլխավոր քարտուղար
Վ.Խաչատրյան	-գլխավոր քարտուղարի տեղակալ
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ	
Լ.Ասլանյանը	-մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը	-մարզպետի խորհրդական
Ն.Հովհաննիսյանը	-մարզպետի օգնական

#### Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Փոխմարզպետ` Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար` Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

#### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

#### 1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին`

Քննարկել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություն Վանաձորի քաղաքային այգու վերակառուցման նախագծման վերաբերյալ:

#### 2. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին`

Անհրաժեշտ վերահսկողություն իրականացնելու նպատակով` մարզպետի մոտ կայացած խորհրդակցությունների ընթացքում տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ զեկուցագրերը, թղթային տարբերակով, ներկայացնել մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Վ.Խաչատրյանին:

#### 3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին`

Վանաձորի համայնքապետարանի համապատասխան մասնագետների հետ համատեղ այցելություններ կատարել, ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վանաձորի Բուլղարական տնակային ավանի վերաբերյալ:

#### 4. Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին`

Ամենշաբաթյա ռեժիմով ներկայացնել տեղեկատվություն (կատարված լուսանկարահանումների տեսքով) մարզում իրականացվող շինարարության ընթացքի վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝**

Սեռավարակի պատճառով մեռելաձնության դեպքի և դրա առաջացման պատճառների վերաբերյալ 10-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Ա.Շահվերդյանին՝**

ա/ 1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզին անհրաժեշտ տնկիների պահանջարկի վերաբերյալ.

բ/ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել հավաստի տեղեկատվություն մարզի համայնքների ցանքատարածությունների վերաբերյալ.

գ/ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ ապահովագրության ծառայության ներդրման վերաբերյալ:

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ա.Ղուբաթյանին՝**

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն նախորդ խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականի կատարման վերաբերյալ:

**8. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչության պետի պաշտոնակատար Ժ.Ղազարյանին՝**

Ամփոփել ՀՈԱԿ-ներում տեղ գտած թերությունները, խախտումները, դրանց հիման վրա գրություն ուղղել մարզի համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով 1-ամսյա ժամկետում վերացնել խախտումները, թերությունները ու ներկայացնել տեղեկատվություն:

**9. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝**

Ընդերքօգտագործման բնագավառի ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների և բացթողումների վերաբերյալ գրություն ուղարկել շահառու համայնքներին և 1-ամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն իրականացրած աշխատանքների վերաբերյալ:

19/05/20



ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

